«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Մերի Մկրտչյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Սյունիքի մարզ, << Գորիսի թիվ 3 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- ----------3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ----------4

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ ԵՎ ԾԵՍԵՐԸ ----------5

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------9

2.1 ՆՈՐ ՏԱՐԻ ԿԱՄ ԱՄԱՆՈՐ ----------10

2.2 ԾՆՈՒՆԴ ԵՎ ՋՐՕՐՀՆԵՔ ---------- 12

2.3 ԿԵՆԴԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ ---------- 13

2.4 ՏՐՆԴԵԶ ԿԱՄ ՏԵԱՐՆ ԸՆԴԱՌԱՋ ---------- 14

2.5 ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ---------- -15

2.6 ԾԱՂԿԱՋԱՐԴ ---------- -15

2.7 ՋԱՏԻԿ ---------- -16

2.8 ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ---------- --16

2.9 ՎԱՐԴԱՎԱՌ ----------18

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ---------- --19

ՆԿԱՐՆԵՐ ---------- --22

ԴԻՏԱՐԿՈՒՄ ---------- 23

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 25

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրի մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Յուրաքանչյուր երեխա հետաքրքրասեր և անհագ է իրեն շրջապատող աշխարհի իմացությամբ: Որպեսզի երեխայի հետաքրքրությունը բավարարվի, և նա մեծանա, բոլորս շահագրգռված ենք մշտական մտավոր և ինտելեկտուալ զարգացմամբ:

Նախադպրոցական կրթության ոլորտում, ինչպես երեխաների զարգացման բոլոր ուղղություններով, այնպես էլ ազգային դաստիարակության առումով բարեփոխումները ոչ միայն անհրաժեշտ են, այլև անխուսափելի: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել նախադպրոցականների հուղաշխարհի վրա: Մանկապարտեզում դրանց հմտալից կիրառումը կօժանդակի կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ըստ Հ. Խաչատրյանի յուրաքանչյուր տոն տվյալ ժողովրդի կենսագրության մի էջն է, պատմության մասնիկը, խառնվածքի ինքնուրույն դրսևորումը: Վաղընջական տոները բանավոր ամենամեծ ստեղծագործություններն են, որ փոխանցվում են սերնդեսերունդ, դարից դար:

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված տոներն ու ծեսերը: Ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ա. Սարգսյան Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ

Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը, սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում: Յուրաքանչյուր ոք, կրթական միջավայրում կրթելու և դաստիարակելու հայրենիքին արժանի , ազգային և ավանդականն արժեքները բարձր պահող անհատը, երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի և ազգի նկատմամբ: Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորոշչում և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները, պետք է ունենալ համապատասխան վերջնարդյունքներ:

Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են, նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի արդյունքն այն էր, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական, բնական, անկաշկանդ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտանում և զարգանում է երևակայությունը: Երեխան կարողանում է ազատ արտահայտել իր միտքը, կողմնորշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը: Կարևոր է որ մանկապարտեզից երեխան իր հետ կյանք տանի բարություն, գեղեցկություն, ուրախություն և սիրո առաջին սերմերը:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐՆ ՈՒ ՏՈՆԵՐԸ

Քրիստոնեական տաղավար տոներից մեկը՝ Զատիկը, մանկապարտեզում վերածվում է մի շքեղ հանդիսության: Այն իսկական հայեցի դաստիարակության հրաշալի օրինակ է: Կարևոր է, որ տոնակատարության կազմակերպիչները պահպանեն ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնեն դրա բովանդակությունն ու աստվածային խորհուրդը:
Զատիկը հեթանոսական տոն լինելով՝ հիմնականում բնորոշում է բնության զարթոնքը և բեղմնավորումը: Նոր կյանքի սկիզբը խորհրդանշող ձուն, ինչպես և կենաց ծառը հին հայերը վերագրում էին մեռնող և հարություն առնող բնության աստծու՝ Արային: Հետագայում այս տոնը քրիստոնեական օրացույցում արժեքավորվոց և կապվեց Հիսուս Քրիստոսի հարության հետ:
Այս տոնակատարությունն իր մեջ ամփոփում է հայկական գեղեցիկ սովորույթներ, անգամ՝ զուտ հայկական ուտեստների պատրաստման և հյուրասիրման տարրեր:
Վերջնական տոնը՝ բուն Զատիկը, կատարվումէ շաբաթվա վերջում՝ կիրակի օրը: Նախընտրելի է մանկապարտեզ հրավիրել նաև ավագ տատիկներին, իսկ եթե ավագները բացակայում են, ապա նրանց փոխարինում են երիտասարդները:Այդ միջոցառումը մեծ խորհուրդ է պարունակում: Սովորաբար մանկապարտեզի հանդեսներին մասնակցում են մայրիկներն ու հայրիկները, և ստվերում են մնում հատկապես մեծ տատիկները: Կարևոր է, որ երեխան փոքրուց մեծարի, օգնի, հարկ եղած դեպքում խնամի ընտանիքի ամենաավագներին:
Այս միջոցառումը, ինչպես նաև Համբարձումը և Վարդավառը սրտամոտ են երեխաներին: Դրանք հայեցի դաստիարակության և կրթության, գեղագիտական, բարոյական, ինչու չէ, նաև պատմական՝ անցյալը իմանալու, գնահատելու և սովորելու տեսակետից հրաշալի դասեր են: Հարստացնում են մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխարհը:

Ծեսերի և ազգային տոների շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Ըստ Ա.Սարգսյանի <<Ծիսակարգը

խիստ կանոնակարգված է, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր>>:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Պետք է կարողանալ ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միանյ մասնակից, այլև փոխանցող: Երեխան քայլ առ քայլ անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով յուրացնում է ծեսը: Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը ու ազգային առանձնահատկությունները: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսը մշակույթի այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը

մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում, մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր:

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի նկատմամբ:Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային անհրաժեշտ է հայեցի կրթություն ու դաստիարակություն և մենք՝ մանկավարժներս պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները: Մենք հայերս մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Մենք պետք է ուժ առնենք մեր ազգային արժեքներից՝ նրանցից վերցնենք լավագույնը, ազգային մտածողության շարժառիթներն ու ուղենիշները: Երեխաների աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող: Ազգային արժեք են նաև ծեսերը: Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք

առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի կրոնում, կենցաղում: Այն խորհրդանշական ձևերով վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում է ազգի, ժողովրդի միասնականությունը: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների: Այս գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները: Հայոց ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել: Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ ու յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Ժողովրդի մեջ տոները նշելու ձգտումը շատ մեծ է, և տոնը ոչ թե հայտարարված տոնական օրն է, այլ՝ այդ օրվա բովանդակությանը և ժողովրդի մշակութային նորմերին համապատասխան տոնա ծիսական արարողակարգը: Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ: Այդ տոներից են Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Համբարձումը, Վարդավառը: Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևախափան ծեսերը՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

https://www.armgeo.am/ancient-armenian-holidays/

ԳԼՈՒԽ 2. ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր տոն տվյալ ժողովրդի կենսագրության մի էջն է, պատմության մասնիկը, խառնվածքի ինքնուրույն դրսևորումը: Վաղնջական տոները բանավոր ամենամեծ ստեղծագործություններն են, որ փոխանցվում են սերնդեսերունդ, դարից դար:

Աշխարհի բոլոր ժողովուրդների նման հայերը ևս ունեցել են տոներ, ծեսեր: Տոնը ազատ, հանդիսավոր օր էր նվիրված որևէ եղելության, գաղափարի, նպատակի: Այն արտահայտում է մեր ժողովրդի հավատը, սովորությունները, որոնց ականատես է փոքրիկը:

Ժամերգությունները, ծեսերը ուղեկցվել են <<Հայր մեր>> աղոթքով, ծանոթ նաև մանուկներին ու պատանիներին: <<Հայր մեր>> աղոթքը կոչվել է նաև <<Տերունական աղոթք>>, որովհետև ըստ Ավետարանի այն իր աշակերտներին սովորեցրել է Քրիստոսը: Քրիստոսը, որի հետ կապվում է մեր թվարկությունը, համաձայն եկեղեցու պատմության, ծնվել էր Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, աշխարհի փրկիչ դառնալու համար: Այս է վկայում և անունը Հիսուս փրկիչ, Քրիստոս՝ Օծյալ Տեր: Մարդիկ հավատացել են ու նրա պատմության հետ կապված ստեղծել են նշանավոր օրեր, ծեսեր, ժամերգություններ, որտեղ կատարվել է տերունական աղոթքը: Ապա այն վերածվելով երգի՝ կրկնվել է թե՛ եկեղեցում, թե՛ նրանից դուրս՝ ծողովրդական ծեսերին և հավաքներին: Այսօր էլ <<Աղոթք երեխաներին>> և <<Հայր մեր>> աղոթքներին հարմար է, որ իրազեկ լինեն նաև ավագ նախադպրոցականները:

Բացի աղոթքներից, փոքրերը ականատես, երբեմն էլ մասնակից են դարձել ժողովրդական տոների կազմակերպմանը, հաղորդակցվել և հաղորդակցվելու են հայ ժողովրդի հոգևոր ժառանգության առավել նշանակալից երևույթներին, ուստի կարևորվում է այդ տոների ծանոթությունն ու այդ առիթով ստեղծված ժողովրդական ստեղծագործությունների օգտագործումը հանդեսներում, որպես երգ, արտասանություն, խաղ, արարողություն:

Հայերի նախնիներից մնացած տոներից են Նավասարդը, Տեարն ընդառաջ կամ Տրնդեզ, Սուրբ Սարգիս, Բարեկենդան, Ծաղկազարդ, Զատիկ, Վարդավառ և այլն: Տոները հետևում են իրար որոշ կարգով և կապ ունեն բնության և տարվա եղանակների հետ:

Հայոց տոներից առաջինը Նոր տարին է:

2.1 Նոր տարի կամ Ամանոր

Ըստ մեզ հասած տվյալների, հայերն ունեցել են երեք նոր տարի, որոնք կոչվել են Ամանոր, Նավասարդ կամ Կաղանդ: Թեև այժմ նոր տարին տոնում են հունվարի 1-ին, բայց հնագույն ժամանակներում մեր նախնիները նոր տարին դիմավորել են մարտի 21-ին, գարնանային գիշերահավասարի օրը: Այդ օրը հայ մարդը նշել է ցնծալի տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, հողագործի աշխատանքը,որպեսզի բերքառատ լինի տարին: Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի մեկը (օգոստոսի տասնմեկը): Ըստ ավանդության Հայկ Աղեղնավորը Հայոց Զոր գավառում սպանել է բռնակալ Բելին և ազատություն պարգևել իր տոհմին ու իր բոլոր հետնորդներին: Այդ հաղթությունը ենթադրաբար տեղի է ունեցել մեր թվարկությունից առաջ օգոստոսի տասնմեկին: Այդ ժամանակներից հայերը նոր տարին սկսել են տոնել օգոստոսի տասնմեկին:

Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ, որը նշանակում է նոր տարի (Նավ-նոր, ա-հոդակապ, սարդ-տարի): Նավասարդի ամենամեծ հանդիսությունը տեղի է ունենում Արածանի գետի ափերին, Նպատ լեռան փեշերին: Տոնախմբությանը ներկա էին լինում երկրի թագավորն ու թագուհին, նշանավոր արքունականները, զորապետները, նաև հայակական բանակը: Հետագայում Հայաստանի տարբեր վայրերում ու գաղթավայրերում հունվարի մեկը ընդունվեց իբրև նոր տարվա սկիզբ, որպես շատ ժողովուդների համընդհանուր տոն: Նոր տարին սկսվում է դեկտեմբերի 31-ին գիշերվա ժամը 12-ից հետո: Այդ ժամին ցնծություն էր ամենուր, ուրախ էին մանավանդ երեխաները: Նրանք այդ ժամին աղմուկ – աղաղակով, երբեմն էլ իրենց պատրաստած փայտե զնգաններով զարկում էին, <<փախցնում>> հին տարին և ցնծությամբ դիմավորում նորը, շնորհավորում: Նրանք առանձնապես ուրախ սպասում էին, երբ նանը կամ մայրիկը բացում էր

քաղցրավենիքով և համեղ ուտելիքներով լի սեղանը: Հնում նոր տարվա սննդատեսակների մեջ առաջինը եղել է հայկական կլորահատիկ ցորենը, որն աճել է միայն Հայաստանում: Եվ նոր տարվա սեղանին մեր նախնիները դրել են այդ ցորենից պատրաստված հաց, որպեսզի բարեբեր դարձնեն նոր տարին:
Երևի այդ հեռավոր ժամանակների հավատալիքի արդյունքն է հայկական ժողովրդական հին առածներից մեկը. <<Նոր տարին հաց չեն փոխ առնում>>: Ժամանակին այդ բառերը ընկալել են այսպես. <<Առանց գինու նոր ատրն կգա, առանց նգածաղկի՝ կուշանա>>: Հնում նգածաղիկը, որը աճում է Մասիսի լանջերին ամենահռչակված հայկական համեմունքն էր: Ախորժաբեր այդ ծաղիկը քաղում, չորացնում և օգտագործում էին նշանակալից օրերին, չէ որ ժողովրդի համոզմամբ նգածաղիկը բոլոր հայերին կապում էր Մասիսի հետ՝ հայ Միջնաշխարհի, կամ՝ հայրենիքի սրտի հետ:
Մեր հնամենի նավասարդյան տոնին աշխատում ենք պահպանել բոլոր այն սննդատեսակներն ու ըմպելիքները, որոնք օգտագործել են մեր նախնիները ազգային նոր տարին նշելիս: Իսկ որպեսզի հարմարացնեն Նոր տարի, Նավասարդ անվանը, նրանք հունվարի մեկի սեղանը զարդարում էին Ն սկզբնատառով սկսվող ուտելիքներով՝ Նգածաղիկ, նուշ, նուռ և այլն:
Տարեմուտի գիշերը և հաջորդ օրը տարածված էր նաև երեխաների տնե տուն շրջելը, երգն ու պարը, շնորհավորանքն ու օրհնանքը, որի համար նրանք ստանում էին գաթա, կարկանդակ և այլ քաղցրավենիք:
Նոր տարվա հետ կապված տոնածառը, որի ավանդությունը ներկայացրել է Հայկ Խաչատրյանը:
Մեր ջրհեղեղից հետո առաջին ձյունը Մասիսի վրա նստել է Հայկ Նահապետի հայր Թորգոմի ժամանակ: Դա եղել է մեզանից չորսուկես հազար տարի առաջ: Մինչ այդ ծառերն ու ծաղիկները ցրտից չէին վախենում, և Հայոց աշխարհը նման էր մշտադալար զմրուխտ բուրաստանի:
Այդ ժամանակներում հեթանոս հայերը նոր տարին տոնում էին գարնանամուտին: Մի անգամ հենց նոր տարվա նախօրեին, արտասովոր ցրտեր իջան Մասիսի կատարից և խուժեցին դաշտերն ու հովիտները:Ծառերն սկսեցին ցրտահարվել: Թորգոմը հող ու արմատով պոկեց տան բակի փոքրի ծիրանենին և տում տարավ:

Իրենց Նահապետի օրինակին հետևեցին մյուս թորգոմազուններ: Մեկն իր բակի դեղձենին էր ներս տանում, մյուսը՝ բալենին, երրորդը՝ բարդու փոքրիկ ուստը, չորրորդը՝ եղևնին: Եվ նոր տարվա շեմին բոլոր Թորգոմազունների տներում էլ ծառեր կային: Հնչեց Նոր տարվա գալուստն ազդարարող ծնծղան, և սկսեցին տոնական ուրախությունները:

Մարդիկ չմոռացան տան կանաչ հյուրին: Պարում էին նրա շուրջը, զարդարանքներ ու նվերներ նետում նրա ճյուղերին:

Ծառն ասես զարդարում, շքեղաշուք էր դարձնում տարեմուտը:

Նոր տարուց հետո, երբ տաքերն ընկան, մարդիկ տներից հանեցին ծառերը և նորից տնկեցին պարտեզներում ու այգիներում:

Հաջորդ տարվա նախօրեին, չնայած ցրտեր չեղան, մարդիկ այգիներից դարձյալ ծառեր տարան տուն և նախորդ տարվա պես ուրախություններ սարքեցին նրա շուրջ:

Այնուհետև հայկական ընտանիքներում բոլոր նոր տարիների գալուստը նշանավորվում էր կանաչ ծառի կամ ոստի ներկայությամբ:

Այդ ծառը դսից տուն մտավ և դարձավ տոնածառ:

Նոր տարվա տոնը հաջող է պատկերել հայ նշանավոր բանաստեղծ Ռ. Պատկանյանը՝ ներշնչելով մարդասիրություն:

2.2 ԾՆՈՒՆԴ ԵՎ ՋՐՕՐՀՆԵՔ

<<Հասկեր>> ամսագրից

Այս տոնը նվիրված է Քրիստոսի ծննդյան հայտնությանը, մկրտությանը:

Դեռ հնագույն ժամանակներում երկրագործությամբ զբաղվող մեր ժողովուրդ ուներ բնության զարթոնքի պաշտամունքի տոն: Հետագայում եկեղեցին այդ տոնը վերափոխեց Ծննդյան տոնի և հունվարի 6-ը սահմանվեց իբրև Քրիստոսի հայտնության և մկրտության տոն: Ծննդյան տոնի նախապատրաստումը սկսվում է հունվարի 5-ին: Այդ օրվա երեկոյան և հունվարի 6-ի առավոտյան կատարվում է Հիսուսի մկրտության հիշատակը: Սրան ուղեկցվում էր ջուր օրհնելու ծեսը եկեղեցում, որը կապված էր ջրի պաշտամունքի հետ: Պատարագիչ քահանան ավազանի ջրում կաթեցնում էր արծաթյա աղավնուց մեռոն և ժողովուրդն այդ

օրհնված ջրից աշխատում էր ստանալ բաժին՝ սրվակով տուն տանելու, երբեմն էլ որպես դեղ օգտագործելու համար:

Ծննդյան տոնի առթիվ տանը ընթրիք է տրվում ու մսի փոխարեն օգտագործում էին ձուկ, և փլավ: Հին սովորությամբ երեխաները այդ երեկո շրջում էին տնից տուն, երգում <<Խորհուրդ մեծ>> և <<Այսօր տոն է>>, <<Ծննդյան ավետիս>> և նվերներ ստանում:

Սրա հետ կապվում է մի ավանդություն՝ <<Կենդանի ծաղիկներ>>, որտեղ բացահայտում է մանուկ Հիսուս Քրիստոսի կերպարն ու թիթեռնիկների առաջացումը:

2.3 ԿԵՆԴԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Քրիստոսը վեց տարեկան հասակում մի փոքրիկ պարտեզ շինեց իրենց բակում: Պարտեզը թեև փոքր էր, բայց այնքան գեղեցիկ էր և այնպես լավ էր զարդարված, որ ամենքը հիացմունքով էին նայում:
Այստեղ ծաղկում էին հրաշալի սպիտակ շուշաններ, նարգիզներ, ամենաթարմ վարդեր և նրանց հետ միասին դաշտային ամեն տեսակ գույնզգույն ծաղիկներ: Մանուկ Հիսուսն ինքն էր մշակում պարտեզը: Նա ամեն օր ջրում էր և իր աչքի լույսի պես պահպանում ամեն մի բույս, ամեն մի տերևիկ: Նա սիրում էր նստել իր պարտեզում և ծաղիկներով շրջապատված շնչել նրանց անուշ բուրմունքը:

Երբեմն նա դուրս էր գալիս փողոցը և կանչում իր հասակակից աղքատ երեխաներին: Երեխաները խաղում, ուրախանում էին այն գեղեցիկ պարտեզում, հիանում էին հրաշալի ծաղիկներով, հոտ քաշում և սիրով համբուրում էին ծաղիկների անուշահոտ պսակները: Այս փոքրիկ քաղաքի բոլոր բնակիչները գիտեին Հիսուսի պարտեզի մասին, շատերը գալիս էին և հիանում ծաղիկների գեղեցկությունով, որովհետև այդպիսի հրաշալի ծաղիկներ դեռ ոչ ոք չէր տեսել: Մի անգամ երեխաները խաղում, աղմկում էին մանուկ Հիսուսի պարտեզում, հանկարծ նրանցից կռվարար տղան ասաց.
—Պարտեզդ լավն է, Հիսուս, բայց որ ուզենամ, նրանից էլ լավը կշինեմ: Այստեղից կհանեմ ծաղիկները, կտանեմ իմ պարտեզում կտնկեմ և այսպիսի պարտեզ

կունենամ:

Մանուկ Հիսուսի աչքերը արտասուքով լցվեցին:

—Ոչ, ձեռք չտաս դրանց,- ասաց նա,- դրանք այնքան քնքուշ են, որ եթե հողից հանես, իսկույն կթառամեն, կոչնչանան... Եվ միևնույն չէ՞ թե ումն է այս պարտեզը, իմը թե՞ քոնը, չէ որ միշտ էլ կարող ես գալ այստեղ և զբոսնել որչափ սիրտդ ուզի: Սակայն այն կռվարար տղան այնքան անգութ գտնվեց, որ վրա ընկավ ծաղիկներին, պոկոտում էր նրանց, անողորմ տրորում էր ոտքերի տակ և ասում.

—Ես որ չունեմ, թող ոչ ոք չունենա:

—Ա՜խ, հարկավոր չէ, մի անի,- բղավեց Հիսուսը, - չէ՞ որ նրանք կենդանի են, նրանք էլ են ցավ զգում:

Եվ նա շտապ հավաքեց պոկոտած ծաղիկները, համբուրում էր նրանց ու շշնջում.

—Թռե՛ք, թռե՛ք այստեղից հեռու, ազատվեցե՛ք..

Եվ օ՜հ, հրաշք... կարմիր, դեղին, կապույտ ծաղիկները նախ թույլ շարժեցին իրենց թերթիկները, ապա թափահարեցին նրանց և մեկ էլ հանկարծ բարձրացան օդի մեջ և Հիսուսի շուրջը սկսեցին թռչել գույնզգույն սիրուն թիթեռնիկները:

2.4 ՏՐՆԴԵԶ ԿԱՄ ՏԵԱՐՆ ԸՆԴԱՌԱՋ

Տրնդեզի տոնը շատ հին ժամանակներից է գալիս: Սկզբում կապված էր կրակի պաշտամունքի հետ: Հետագայում անցել է քրիստոնեությանը և ստացել է նոր բովանդակություն: Այն համարել են քառասունօրյա Հիսուսին տաճար տանելու և Աստծուն ընծայելու տոն: Տեարն ընդառաջ նշանակում է դիմավորել, ընդառաջ գնալ Քրիստոսին: Տոնը, որ հնագույն շրջանում բնության պաշտամունքին էր նվիրված, նշվում է պատարագով, ուրախ տոնախմբությամբ: Այդ օրվա երեկոյան (փետրվարի 14) ամենուրեք խարույկ էին վառում, սկզբում եկեղեցու, ապա տների բակերում: Հավատացյալները ժամի մոմերից վառում էին իրենց ձեռքի մոմերը և առանց հանգցնելու հասցնում տները, այնտեղ ճրագ կամ կրակ վառելու համար: Սովորություն կար. Երիտասարդները երգում, պարում էին կրակի շուրջը իրենց ուժեղ, զորավոր դառնալու նպատակով: Վառելով խարույկները՝ մարդիկ ցատկում էին կրակի վրայից և ասում. <<Քո կարմրությունն ինձ լինի, իմ դեղնությունը՝ քեզ>>: Նույն օրը տան անդամների թվի համաձայն տան բակի մեջ մոմեր էին վառվում մինչև

առավոտ: Խարույկից հետո, երբ մոխիրը սառչում էր, նորից սկսվում էր աշխուժությունը: Երեխաները մատները մոխրի մեջ մտցնելով կատակում քսում էին իրար երեսի, մոխիրը լցնում կարասների, ամանների վրա, ցրում գոմերում, հավանոցներում, դրանով ակնկալելով առատություն, բարիք, երջանկություն:

2.5 ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բուն բարեկենդանը (բարի կյանք է նշանակում) ժողովրդի դարերից եկող սովորության համաձայն մեծ պասին (40 օր) նախորդող օրն է, երբ ժողովուրդն առատ վայելում է զանազան համեղ ուտելիքներ, պատրաստում ճոխ սեղաններ, կազմակերպում ժողովրդական բազմազան խաղեր, կատակ, թատերականացված հանդեսներ: Մեր նախապապերը կարծել են, թե այդ ձևով կվարակեն արթնացող բնությունը և նա առաջիկայում առատություն կբերի մարդկությանը: Սրան է նվիրված <<Բարեկենդան>> բանաստեղծությունը:

2.6 ԾԱՂԿԱԶԱՐԴ(ԾԱՌԶԱՐԴԱՐ)

Գարինան գեղեցիկ տոներից մեկը կոչվում է Ծաղկազարդ կամ Ծառզարդար: Եկեղեցին այդ օրը նշում է ի պատիվ Քրիստոսի Երուսաղեմ մտնելուն, ուր նրան դիմավորում են, ողջունում արմավենու, ձիթենու ճյուղերով: Սա հնագույն ժամանակներից եկած տոն է, ուր փառաբանում է բնության զարթոնքը, գարնան գալը: Այս տոնին հայերն իրենց տներն ու բնակարանները զարդարել են ուռենու ճյուղերով, պատրաստել անուշեղեններ և համեղ կերակրատեսակներ: Հնում ծաղկազարդի օրը եկեղեցում ծառ էին զարդարում մրգերով, մոմերով, հետագայում՝ արմավենու, ձիթենու տերևով: Որոշ տեղերում այրում ու մոխիրը քամուն էին տալիս, որպեսզի փորձանքից, բնական աղետներից, մրրիկից, փոթորկից հեռու մնան: Այժմ եկեղեցում ծառ չեն զարդարում: Ծառ զարդարում են Ամանորին: Հայերը հին և մեծ ծառերը սուրբ են համարել և պաշտել ինչպես աղբյուրներին: Դրանց առաջ մոմ են վառել, խունկ ծխել, աքաղաղ ու ոչխար մատաղ արել, համբուրել, ճեղքված բներով անցել՝ չար ոգիների ազդեցությունը վերացնելու համար: Հավատացել են, թե այդ ծառերի վրա երկնային լույս է իջնում և դրանց վրա սրբեր են ապրում, որ ծառերը բուժիչ հատկություններ ունեն: Սուրբ ծառի մոտով անցնելիս ձեռնափայտը թողել են այնտեղ՝ հիվանդություններից ազատվելու համար: Խեժը քսել

են հիվանդ մաշկին: Փտած ծառերի փայտն օգտագործել են որպես դեղ: Նրանց համոզմամբ ծառերը և աղբյուրները բուժում են նաև անասուններին: Հիվանդ անասուններին երեք անգամ պտտել են սուրբ ծառի շուրջը, կոտրել զանազան և թողել ծառի մոտ:
Սուրբ ծառը վնասելը համարվել է մեղք, սրբապղծություն: Ծաղկազարդի օրը կատարել են բնությոն զարթոնքը գովեզող երգեր: Երեխաների և պատանիների խմբերը տնից տուն էին շրջում և երգում (ճյուղ հավաքում): Նրանք ուռենու օրհնված ճյուղերը եկեղեցուց տուն կամ տնից տուն են տանում, նվերներ ստանում:

2.7 ԶԱՏԻԿ

Զատիկը Քրիստոսի հարության տոնն է: Այն կապված է Քրիստոսի տառապանքների, մահվան ու հարության պատմության հետ: Այն տոնում են մեծ հանդիսավորությամբ՝ եկեղեցում պատարագով, տոնախմբություններով: Սովորաբար այդ տոնին զատկական կերակուրներ են պատրաստում: Չամիչով, ընկույզով, նշով համեմված փլավ, ձուկ, տապակած բանջարեղենի հետ ձվեր են ներկում կարմիր գույնով՝ ի նշան Քրիստոսի արյան: Ձվերով իրար շնորհավորում են, նվեր են տալիս, ապա ուտում, կամ էլ հավաքվում հավկիթով խաղալու: Զարկելով փորձում են նրանց ամրությունը կամ էլ թեքություն ունեցող տեղ գլորում, ում ձուն կոտրվում էր՝ նա զիջում էր խաղընկերոջը:
Հայերը ձուն ներկում էին որդան կարմիր ներկով՝ որպես ուրախության, հաջողության նշան: Դրա համար է, որ նախ կարմիր ձու էին ուտում,հետո ուրիշ կերակուրներ: Զատիկին մարդիկ իրար տուն էին գնում, շնորհավորում <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, որի պատասխանն էր <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>: Եկեղեցու բակերում մինչ ուշ երեկո ուրախ խաղեր են խաղացել, երգել ու պարել:

2.8 ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Զատիկից 40 օր հետո, հինգշաբթի, Հիսուս Քրիստոսի համբարձման տոնն է, Քրիստոսի երկինք համբառնելու և իր հոր՝ Աստծու աջ կողմը նստելու հիշատակի օրը: Համբարձումը ժողովրդի մեջ կոչվում է նաև վիճակի << Ջան գյուլում>>-ի օր: Համբարձման օրը նաև ջրի ու ծաղկի տոն է: Զուր չէ, որ այն համարվել է երկրորդ ծաղկազարդ: Այդ օրը կանայք ոչ մի գործ չեն անում, որպեսզի երեխաները ծաղիկ

կամ կարմրուկ հիվանդություններով չհիվանդանան: Չորեքշաբթի, լույս հինգշաբթի գիշերը համարվել է հրաշալիքների գիշեր: Ավանդույթը պատմում է, որ գիշերվա ընթացքում մեկ րոպեն կանգ են առնում, լռում: Երկինքն ու երկիրը համբուրվում են, լեռները, քարերը, ծառերն ու ծաղիկները շարժվում են իրար ողջունելու համար: Բոլոր բույսերն ու անշունչ առարկաները լեզու են առնում, միմյանց հետ խոսում, պատմում, թե ով ինչ հիվանդություն է բուժում: Չորեքշաբթի, արևամուտից հետո ընտրվում է յոթ աղջիկ: Բախտանշաններով փարչը, կճուճը կամ <<վիճակը>> աղջիկներն անխոս վերցնում էին, և սկսում աղբյուրից կամ ջրհորից ջուր վերցնելու արարողությունը: Յուրոքանչյուրից վերցնում էին մի ափ ջուր: Ջրի մեջ գցում յոթ տեսակ ծառից , յոթ տեսակ ծաղիկներից մեկական տերև և թերթիկ, ինչպես նաև յոթ քար և մի բուռ ավազ: Ջուրը վերցնելու ծեսը ջուր գողանալ էր համարվում, որը կողմնակի աչք չպետք է տեսներ: Համբարձման տոնին աղջիկները գույզգույն զգեստ հագած (հատկապես կարմիր և կապույտ) ծաղկազարդ տեղերում կազմակերպում էին զբոսանք և վիճակախաղ: Երիտասարդները մոտակա սարալանջերում կամ դաշտերում, խմբերի մեջ թավալվում էին, կոխ էին բռնում, երեխաները ճան, քարկտիկ և այլ խաղեր խաղում, իսկ աղիջկները շարունակում էին նախորդ օրը սկսած վիճակի, գուշակության արարողությունը: Բախտագուշակների փարչի, կամ կճուճի մեջ կանայք և աղջիկները յուրաքանչյուրը գցում էին, ասենք, մատնոց, կոճակ <<>> և այլն: Այնուհետև կճուճի երեսը ծածկում էին շորով, մոտը նստեցնում մի աղջնակ, գլխին գցում ծածկոց, որպեսզի ոչ աղջնակին, ոչ էլ կճուճը ոչ ոք չտեսնի: Մի խաղիկի խմբակային երգերից հետո աղջնակը, կճուճից հանում էր գցած իրերց որևէ մեկը ու հանձնում խաղը վարողին: Վիճակն ընկնում էր այդ առարկայի տիրոջը: Ամեն անգամ մի քառատող երգելուց հետո հանվում էր մի նոր առարկա, որը մեծ հետաքրքրություն և աշխուժություն էր առաջացնում: Մեծերը բարեմաղթում և օրհնում էին վիճակի տիրոջը: Երգող հարսներն ու աղջիկները բաժանվում էին երկու խմբի: Առաջին խումբն ասում էր երգի, խաղիկի խոսքերը, իսկ մյուսը՝ կրկնում <<Ջան գյուլում, ջա՛ն - ջա՛ն>> երգելով:

Համբարձման տոնին օգտագործվող <<Ջան գյուլում>> խաղիկների օրինակներից են <<Վիճակի երգը>>, <<Ջան գյուլումները>>, <<Խնկի ծառը>>:

2.9 ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառ կամ վարդեվոր տոնի անունը կազմվել է վարդ բառից: Այն կապվել է ջրի, Անահիտ և Աստղիկ աստվածուհիների պաշտամունքի հետ: Նրա հետ կապված բոլոր ծեսերն ուարարողությունները առնչվել են ջրի հետ և հնուց տոնվել մեծ խանդավառությամբ: Քրիստոնեությունն ընդունել է այն անփոփոխ, միայն հարմարացրել է պատմությանը և վերանվանել Քրիստոսի պայծառակերպության տոն:

Վարդավառը համարվում էր նաև բերք ու բարիքի տոն: Վարդավառին կազմակերպվում էր ջրարշավներ, ըմբշամարտեր, գոմեշներ էին կռվեցնում, տները զարդարում ծառի դալար ճյուղերով, ծաղիկներ էին նվիրում միմյանց, աղավնիներ թռցնում, անասունների ճակատները զարդարում ծաղիկներով և ջուր էին լցնում իրար վրա ասելով <<Վարդավառ վարձքդ կատար>>: Այդ օրը իրար խնձոր էին նվիրում, մատաղ էին անում ի պատիվ ջրի հովանավոր որդիների, անձրև խնդրում երաշտը կանխելու համար: <<Վարդավառը>> կապել են ոչ միայն հայ Անահիտի, այլ նաև ջրհեղեղի հետ:

Այսպես. Ղ. Ալիշանը պատմում է, թե երբ Նոյ նահապետը ջրհեղեղից փրկվելով հասնում է Մասիսի գագաթը և ապա այնտեղից իջնում է Նախիջևան, այդ օրվանից սկսվում է հայոց Նավասարդ կոչվող ամիսը, և որպեսզի ջրհեղեղի հիշատակն անմոռաց մնա մարդկանց մեջ, Նոյը պատվիրում է իր որդիներին իրար վրա ջուր լցնել:

Վարդավառին նվիրված երգեր կան, որոնք կատարում են նաև երեխաները: Դրանցից է <<Վարդավառ>>(Ն. Միքայելյան):

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՈՒսումնական գործընթացը մանկապարտեզում պարապմունքը անց եմ կացրել դահլիճում, աշխատել եմ ավագ խմբում, ԿԶՆԱԿ մոդելով եմ կիրառել, աշխատել եմ ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ ԽԻԿ համակարգով:

Խումբ՝ Ավագ

Թեմա՝ <<Սուրբ Զատիկ>>

Տեսակ՝ Բաց – պարապմունք(ցերեկույթ)

Նպատակը՝ Ծանոթացնել երեխաներին ազգային ծեսերի և տոների հետ: Ուսուցանել ոտանավորներ ծեսերի մասին: Դաստիարակել ազգային ոգի և կամք:

Վերջնարդյունք՝ Կիմանա ազգային որոշ ծեսերի և տոների մասին, կարտասանի որոշ ստեղծագործություններ, կուղղի համապատասխան հարցեր՝ տեղեկություններ ստանալու նպատակով:

Կապը չափորոշչի հետ՝ ԽՀ(ե,զ), Ի(ա,բ), ՀՍԱ(ա,բ,դ,ե), ԻԱԱ(ա,գ):

Ընթացք՝ Տոնին նախապատրաստվելու համար նախորոք երեխաների հետ միասին սկուտեղի մեջ ցանել ենք ցորեն, պարապմունքից մեկ օր առաջ երեխաների հետ միասին սոխի կճեպներով և այլ նյութերով ներկում են խաշած ձվերը և նկարազարդում:

Երեխաները նստած են սեղանների շուրջը: Դրված են սեղաններին՝ գաթա, հալվա, ածիկ, փոխինձ, գունավոր ձվեր, չամչով փլավ, այդ ամենը՝ կավե ամանների մեջ: Դահլիճի մի անկյունում դրված է մի մեծ, սպիտակ ձու, որի միջից հետագայում դուրս է գալու ճուտիկ-երեխա: Մյուս անկյունում՝ իղձերի իրականացման ծառն է, որի ճյուղերից կախված են ձվիկներ և գունավոր թաշկինակներ:

Խթանում՝ Լսվում է մեղմ եկեղեցական երաժշտություն և արտասանել հետևյալ խոսքերը.

Դաստիարակ

Բոլոր աշխարհ կբերի,
Զատկի զանգակք կհնչեն,

Շուշաններն էլ ցնծումով լի
Գարունը կողջունեն:
Եվ կինչի զանգակը խոշոր,
Կարձագանքեն լեռ, սար ու ձոր
Մարդիկ՝ խայտուն, սիրով ջերմիկ
Ի՞նչ գեղեցիկ է այս Զատիկ:

Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից մեկը, որը խորհրդանշել է աշխարհի նորացումն ու բարության զարթոնքը: Ենթադրվում է, որ <<Զատիկ>> բառը կապված է տիեզերական արարչագործության և նշանակվում ՝ <<զատվել >>, <<բաժանվել>> քրիստոնեության շրջանում այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել են սերմը հողի մեջ թողելու՝ <<մահ>> և նրա ծլարձակման՝ <<հարության>> հետ:
Իսկ դուք գիտեի՞ք, որ արդեն երկու հազարամյակ քրիստոնյա աշխարհի մարդիկ Սուրբ Զատիկի օրը իրար ավետում են. <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>> և պատասխանը <<Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի>

<u>Իմաստի ընկալում</u>

Երեխաները արտասանում են՝

Նորն է ծնունդ առնում էսպես
Ու շարունակ պտույտ գալիս,
Դա հրաշք է, ուրիշ էլ ի՞նչ:
Եվ անունն է այդ հրաշքի՝
Հարություն կամ կարմիր Զատիկ:

Մեծ Զատիկն է, սուրբ Զատիկը,
Եկենք նշենք այս սուրբ տոնը,
Երբ Հիսուսը նորից ծնվեց
Եվ իր օրհնանքը մեզ տվեց

<u>Երեխաները երգում են՝</u> <<Տարվա մեջ ուրախալի>> երգը:

Երեխաներին առաջարկում եմ հանելուկներ.

Ու լուլիկ –պուլուլիկ
Ոչ դուռ ունի , ոչ՝ երդիկ:

Միասին պատասխանում են՝ ձուն է ձուն:

—Այո՛ ձուն է՝ Զատիկի խորհրդանիշը:

Այն ի՞նչն է, ինչը ,
Շնչավորից անշունչն ելավ,
Անշունչից էլ շնչավոր:

(Զուն է , ձուն)

Դաստիարակ՝ Երեխանե՛ր, այս ի՞նչ ձայն է լսվում: Պատրաստված մեծ ձվից լսվում է կտկտոց,ապա այն ջարդվում է, և դուրս է գալիս մի երեխա –ճուտիկի հագուստով, թռչկոտելով պտտվում է ձվի շուրջը և արտասանում՝

Խատուտիկ հավիկները
Աձել են այս ձվերը,
Երբ մայրիկը ձուն բերեց,
Տատիկը նախշուն ներկեց:

Երգել - <<Չամչով փլավ>> երգը:
Երգելու ընթացքում խոհարարի ձեռքին՝ սկուտեղի վրա, դրված է չամչով փլավ, որի մեջ ձու է թաքցված:

Խոհարարը՝ Տեսնենք՝ ձուն ու՞մ ափսեի մեջ կհայտնվի, ու՞մ է ժպտալու բախտը:
Կշռադատում - խաղալ - <<Գտիր ձուն>>
Խաղից անմիջապես հետո երեխաներին բաժանվում է չամչով փլավ և սկսվում է ձվով կռվախաղը:

Դաստիարակ՝ Մեր պապերն ու մեր տատերը պաս են պահել, ձու են ներկել, օրհնել են մեծ Զատիկը սրբազան, պահպանել են ավանդույթը հայկական:

Եկե՛ք մենք էլ պահպանենք մեր հայկական գեղեցիկ ավանդույթները: Ձեր Զատիկն էլ շնորհավոր լինի և միմյանց շնորհավորեցինք՝ <<Քրիստոս հարյավ ի մեռելոց , Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>





ԴԻՏԱՐԿՈՒՄ

ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՐԵՏԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պարապմունքն ամբողջովին համապատասխանում է նախադպրոցական տարիքին խմբի ծրագրին և պլանավորմանը: Առկա են անհրաժեշտ պարագաները, դիդակտիկ նյութերը...

Դաստիարակի խոսքն արտահայտիչ էր, մատչելի, բացատրական տերմինները՝ համապատասխանեցված: Պարապմունքը անց է կացվել **ԽԻԿ** համակարգով: Փուլերն ու տևողությունները պահպանված են, պարապմունքի ընթացքում օգտագործվել են երեխայի ինքնուրույն մտածողության, ակտիվության, ուշադրության, կենտրոնացման և հարցադրումների մեթոդներն ու հնարքները:

Դաստիարակը հասավ իր նպատակին՝ կիրառելով պարապմունքի պլանավորման բոլոր կետերը: Դաստիարակն իր հմտությամբ և կարողունակությամբ անցկացրեց պարապմունքը, որտեղ բոլոր երեխաներն ընդգրկված էին պարապմունքին և հասան իրենց վերջնարդյունքին:

ՄԵԹՈԴԻՍՏ՝ ՊԱՅԾԱՌ ՄԱՔՈՒՆՑ

Բաց – պարապմունքի տեսակը ինտեգրված է խոսքի զարգացում, նկարչություն, երաժշտություն: Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է ավագ խմբի ծրագրին: Ձևակերպված է պարապմունքի թեման, որն է՝ տոներ և տոնակատարություններ. <<Սուրբ Ձատիկ>>: Անհրաժեշտ պարագաները, դիդակտիկ նյութերը նույնպես համապատասխանեցված են պարապմունքին: Դաստիարակի խոսքը գրագետ է, պարզ, ունի խոսքի չափավոր տեմպ: Պարապմունքը տարվել է ԽԻԿ համակարգով, պահպանվել է տևողությունը(25 րոպե): Կիրառվել են ձևավորող գնահատման ձևեր, փոխգործուն մեթոդներ՝ խաղ, զրույց, ոտանավորի ուսուցում: Դաստիարակը պարապմունքի ընթացքում ապահովում է հետադարձ կապ յուրաքանչյուր սանի հետ ու ստեղծում մոտիվացիա՝ խթանելով հետաքրքրությունը: Պարապմունքի ընթացքում ներգրավված էին բոլոր սաները:

Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին: Նպատակը հետևյալն է՝

1. Ծանոթացնել երեխաներին ազգային ծեսի հետ
2. Ուսուցանել ոտանավորներ
3. Դաստիարակել ազգային ոգի և կամք

Երեխաները կարողացան ճիշտ ներկայացնել ազգային տոնը՝ <<Սուրբ Զատիկը>>, պարապմունքի ողջ ընթացքում արտահայտված էր երեխաների ոգևորությունը, բարձր էր ազգային ոգին, նկատվում էր զգայական գործընթացի առաջատարությունը: Երեխաները ստացան գիտելիքներ տոների, մշակութային արժեքների մասին ու կարողացան կապակցված նախադասություններով ներկայացնել:

Կարևորում եմ հետազոտվող թեման, հատկապես երբ ինտեգրված պարապմունքի տեսքով է ներկայացված, քանի որ գործունեության այս ձևը նպաստում է զարգացնել ինքնուրույն մտածողություն, համագործակցություն: Ինտեգրված պարապմունքները միտված են նաև լուծելու մի շարք խնդիրներ: Ուսուցման այս ձևը մի շարք կապեր է հաստատում առարկաների և երևույթների միջև, ու համարվում է արդյունավետ պարապմունքի ձև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտական արդյունքում տեսական գրականության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների, ուսումնասիրության և վերլուծության, ծեսերի և ազգային տոների ուսումնասիրման, մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը:

Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պահանջում են երաժշտական, պատմական, տեխնոլոգիական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն կարծիքը, որ բազմակողմանի է երեխաների զարգացումը, քանի որ ազգային ոգով զուգընթաց զարգանումէ երեխայի խոսքը և լեզուն:

Որ ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի լրացումն է, գեղագիտական ընկալումն է:

Առանձնահատկությունը այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց, նրանց միասնական գործողությունները, գաղափարները և մտքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասյա Հովհաննիսյան, Լուսինե Ղույումչյան, <<Բարև փոքրիկ>> 2007թ., էջ 10-24
2. Լալա Սմբատյան, <<Տոնական ղողանջներ>>, 2011թ., էջ 36-46
3. Հայ ժողովրդական տոներ, Հ. Խառատյան
4. Նախաշավիղ, 2013թ., էջ 24-28
5. https://www.armgeo.am/ancient-armenian-holidays/